

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 6 >> 10 2011թ


№ 146

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
<<ԳՈՐԻՍԻ ՍՏՈՄՈՏՈՂՈԳԻԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒՑԱՐՄԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ կետի, 67-68-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի ապրիլի 12-ի <<Գորիսի ստոմոտոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին N418-Ա որոշման և հիմք ընդունելով << Սյունիքի մարզպետի 2007թվականի դեկտեմբերի 14-ի N288-Ա որոշմամբ ստեղծված՝ ընկերության լուծարային հանձնաժողովի ներկայացրած լուծարման հաշվեկշիռն ու << կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի Գորիսի տարածքային հարկային տեսչության կողմից 2011թվականի սեպտեմբերի 23-ին տրված N992 տեղեկանքը , որոշում եմ՝

1. Հաստատել <<Գորիսի ստոմոտոլոգիական պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության լուծարման հաշվեկշիռը՝ 20.09.2011 թ. դրությամբ (կցվում է):
2. Լուծարային հանձնաժողովին՝ հաստատված լուծարման հաշվեկշիռը և օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել << Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ընկերությունը սնանկ ճանաչելու համար:
3. << Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ


Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ